ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի թիվ 347 – Ա

ՆՎԱՐԴ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով ԱՄՆ դեսպանատան հասարակայնության հետ կապերի բաժնի տնօրենի հրավերը, Ն. Հարությունյանի զեկուցագիրը, ՀՀ արտաքին գործերի նախարարության 2026 թվականի օգոստոսի 5-ի N 1102/40131-26, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2026 թվականի օգոստոսի 7-ի № ԴԽ//30085-2026 գրությունները՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ.

1. ՀՀ Սյունիքի մարզպետի խորհրդական Նվարդ Հարությունյանին 19 օրով՝ 2026 թվականի օգոստոսի 28-ից սեպտեմբերի 15-ը ներառյալ գործուղել Ամերիկայի Միացյալ Նահանգներ՝ օգոստոսի 29-ից սեպտեմբերի 12-ը Վաշինգտոնում անցկացվող «Խոսքի ազատությունը՝ որպես ժողովրդավարության հիմնաքար» խորագրով միջազգային այցելությունների առաջնորդության ծրագրին մասնակցելու նպատակով:

2. Ֆինանսական վարչությանը՝ հաշվի առնել, որ գործուղման ծախսերը հոգում է հրավիրող կողմը:

3. Ն. Հարությունյանին՝ գործուղման արդյունքների մասին հաշվետվությունը ներկայացնել ՀՀ ՏԿԵ նախարարություն:

2026-08-07 18:46:00 GMT+4
Համաձայն[illegible]-ի կողմից

ՀՀ Սյունիքի մարզպետի
ժամանակավոր պաշտոնակատար **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2026թ. օգոստոսի 7
ք. Կապան